Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1287-10.11.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածում 1-ին կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ «1.1» և «1.2» ենթակետերով.

«1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տալու համար	բազային տուրքի 25-ապատիկի չափով
1.2 Նույնականացման քարտի տրամադրման համար	բազային տուրքի 3-ապատիկի չափով»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ կետի 15.4-րդ ենթակետի «բազային տուրքի 5000-ապատիկի չափով» բառերը փոխարինել «բազային տուրքի 1000-ապատիկի չափով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 15-րդ կետի «բազային տուրքի տասնապատիկի չափով» եւ «բազային տուրքի 20-պատիկի չափով» բառերը փոխարինել համապատասխանաբար «բազային տուրքի 30-պատիկի չափով» և «բազային տուրքի 60-պատիկի չափով» բառերով, իսկ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 44-րդ, 45-րդ, 46-րդ, և 47-րդ կետերով՝

«44. Թվային տախոգրաֆի՝	
ա) վարորդի քարտը տալու համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

բ) կազմակերպության քարտը տալու համար	բազային տուրքի 70-ապատիկի չափով
գ) արհեստանոցի քարտը տալու համար	բազային տուրքի 70-ապատիկի չափով
45. Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ կամ չվնասազերծված տարաներ փոխադրելու թույլտվություն տալու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
46. Հայաստանի Հանրապետության բեռնափոխադողներին Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի անդամ պետությունների միջև անսահմանափակ քանակով երթեր կատարելու իրավունք տալու համար՝	
ա) 6 շաբաթ ժամկետով	բազային տուրքի 5-ապատիկի չափով
բ) 1 տարի ժամկետով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
47. Հայաստանի Հանրապետության բեռնափոխադրողներին ավտոմոբիլային փոխադրումների մասին միջազգային համաձայնագրերով սահմանված մեկանգամյա փոխադրման իրավունք տալու համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-րդ կետով՝

«15.1. ԱՏԳ ԱԱ 26 ապրանքային ծածկագրերին դասվող հանքաքարերի արտահանման սերտիֆիկատ տալու համար՝	Յուրաքանչյուր անգամ արտահանվող հանքաքարի տվյալ ծավալում մետաղի պարունակության

	և դրա միջազգային շուկայական միջին գնի հիման հաշվարկված արժեքի 3 տոկոսի չափով

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ստացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Ներկայացված առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
Հայաստանի Հանրապետության կառավարություն	1. Առաջարկվում է ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տալու համար սահմանել բազային տուրքի 25-ապատիկի չափով պետական տուրք:	Ներկայացված առաջարակությունը պայմանավորված է ՀՀ-ում նույնականացման քարտերի և կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի ներդրմամբ: Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է պետական բյուջեի եկամուտների ավելացում:	Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2. Առաջարկվում է նույնականացման քարտի տրամադրման համար սահմանել բազային տուրքի 3-ապատիկի չափով պետական տուրք:		Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	3. Առաջարկվում է թվային տախոգրաֆի քարտ տալու համար սահմնել պետական տուրքեր՝ ա) վարորդի քարտը տալու համար՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով, բ) կազմակերպության քարտը տալու համար՝ բազային տուրքի 70-ապատիկի չափով գ) արհեստանոցի քարտը տալու համար՝ բազային տուրքի 70-ապատիկի չափով:	Ներկայացված առաջարկությունը պայմանավորված է ՀՀ ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների անվտանգության բարձրացման, ինչպես նաեւ ոլորտի պետական կարգավորման եւ վերահսկողության բարձրացման ուղղությամբ վարվող քաղաքականությամբ:	Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	4. Առաջարկվում է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ կամ չվնասազերծված տարաներ փոխադրելու թույլտվություն տալու համար սահմանել պետական տուրք բազային տուրքի 10-ապատիկի չափով:		Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	5. Առաջարկվում է ՀՀ բեռնափոխադողներին տրանսպորտի նախարարների եվրոպական		Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել

	կոնֆերանսի անդամ պետությունների միջև անսահմանափակ քանակով երթեր կատարելու իրավունք տալու համար սահմանել պետական տուրքեր՝ ա) 6 շաբաթ ժամկետով երթերի համար ՝ բազային տուրքի 5-ապատիկի չափով բ) 1 տարի ժամկետով երթերի համար ՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով		է համապատասխան փոփոխություն:
	6. Առաջարկվում է ՀՀ բեռնափոխադրողներին ավտոմոբիլային փոխադրումների մասին միջազգային համաձայնագրերով սահմանված մեկանգամյա փոխադրման իրավունք տալու համար սահամնել բազային տուրքի 5-ապատիկի չափով պետական տուրք:		Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն: